

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՊՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇ ՏԱՐԻՐՐՈՒ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ԻՏԱԼԻՈՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ճարտարապետությունը մարդկային մտքի բարձր արտայայտություններն մեկն է: Իսկ Հայ Ժողովուրդի բնութագրական կարեւոր յատկանիշներն մեկը կառուցանելու ոգին է: Պատմությունը վկայ է թէ մեր Ժողովուրդը, իր բազմադարեան պատմութեան ընթացքին, յաջողեր է ստեղծել եկեղեցական-պաշտամունքային ճարտարապետական այնպիսի բարձրարուեստ կառույցներ, որոնք ոչ միայն իւրայատուկ տեղ գրաւած են մեր ազգային, այլեւ համամարդկային մշակոյթի եւ գեղարուեստի պատմութեան մէջ: Դժբախտաբար Հայ դասական ճարտարապետութենէն քիչ յուշարձաններ պահպանուած են այսօր եւ շատ ատելի նուազ է այն եզակի կառույցներուն թիւը, որոնք հասեր են մեզի կանգուն վիճակով, առանց էական փոփոխություններու եւ վերակառուցումներու:

Այսպիսի կառույցներուն արժէքը, այսօր, անգնահատելի է ոչ միայն Հայ ժողովուրդի մշակոյթին, այլեւ համաշխարհային արուեստի եւ ճարտարապետութեան ծիրէն ներս:

Համաձայն արուեստի Հայ եւ օտար մասնագէտներու հաստատ կարծիքին, Հայկական ճարտարապետությունը տարածուած է Հայաստանէն դուրս՝ դրացի երկիրներուն մէջ, յատկապէս ազդած է Յոյն-Բիւզանդիոնի վրայ եւ ատելի կամ նուազ չափով յատակ ազդեցություններ եւ հետքեր թողած է հարաւային Ռուսաստանի, Պալքաններու, Իտալիոյ, Ֆրանսայի, Սպանիոյ եւ մինչեւ Սկանտինաւիայի եւ Իրլանտայի մէջ¹:

Հայ Մշակոյթին, Արուեստին եւ Ճարտարապետութեան պատմութեան այս նիւթին նուիրուած գիտական մակարդակով ուսումնասիրություն մը հրատարակուեցաւ Երեւանի մէջ, 2012ին՝ «Հայ-Իտալական ճարտարապետական Առընչություններ» անունով: Հեղինակը՝ Վարուժան Ազդեհիւրեան, յայտնի ու վաստակաւոր ճարտարապետ մըն է, որուն հետազօտական սպառիչ ուսումնասիրությունը իբր սեւեռակէտ ունի Հայկական ճարտարապետութեան բացայայտ եւ անժխտելի ազդեցությունը,

¹ Տե՛ս «Հայկական ճարտարապետութեան Յուշարձաններ», Պէյրութ, 1972, էջ 15, հրտկ. Համազգային:

ներգործությունը և դերը (impact) Իտալական և Եւրոպական եկեղեցական ճարտարապետության մէջ:

Իսկապէս բազմաբնոյթ են այն ոլորտները, որոնք ընդգրկուած են այս արժէքաւոր աշխատության մէջ: Այդ ոլորտներն են՝ Հայկական ճարտարապետության գլուխ-գործոցներու ուսումնասիրությունը և գիտական արժեւորումը, մերձաւոր երկիրներու հետ ստեղծուած ճարտարապետական առնչությունները և բացայայտ ազդեցությունը անոնց վրայ, Հայկական ճարտարապետության ժառանգության յուրջ պաշտպանության և պահպանության հարցերը, ինչպէս նաեւ Հայ վարպետներու ստեղծագործություններուն լիարժէք արժեւորումը և Հայկական ճարտարապետության տեսության և պատմության այլ կարեւոր խնդիրներ:

Հայկական ճարտարապետական գիտության շատ կարեւոր խնդիրներէն մէկն է Հայաստանի և դրացի ժողովուրդներու ճարտարապետական առնչություններու ուսումնասիրությունը: Այս տեսակէտով, Ազշեհիրլեանի գիտական ուսումնասիրությունը ամբողջութեամբ կը զբաղի Հայկական ճարտարապետության բնորոշ տարրերով, ազդեցություններով, բաղդատություններով, վերլուծումներով և գիտական փաստացի արժեւորումներով: Ուսումնասիրության մէջ կը ներկայացուին նաեւ Հայկական ճարտարապետության վերաբերող Հայ և օտար Արուեստի մասնագէտներու տեսություններ և կարծիքներ, բարձր գնահատականներ, որոնց վրայ կարելի է աւելցնել Փրանսացի արուեստաբան՝ Անտրէ Կրապարի հեղինակաւոր այն կարծիքը թէ «Հայաստան ստեղծած է իրապէս ազգային առաջին քրիստոնէական ճարտարապետությունը և այս իմաստով կանխած է Եւրոպայի Միջին Դարու ճարտարապետական դպրոցները»²:

Հայ-Իտալական ճարտարապետական առնչություններով և ազդեցություններով զբաղած են Ղեւոնդ Վրդ. Ալիշան³, Մեսրոպ Վրդ. Ուղուրլեան⁴, Եոզէֆ Ստր-ժիգովսկի⁵, Արշակ Ալպոյաճեան⁶, Արմէն Զարեան⁷, Լեւոն Զէքիեան⁸ և ուրիշներ: Սակայն, ճարտարապետական հիմնական հարցերը համագամանօրէն և լիարժէք կերպով չեն ուսումնասիրուած: Այս տեսակէտով, ճարտարապետ Ազշեհիրլեանի ուսումնասիրությունը այդ խնդիրները հասցուցած է իրենց գիտական բարձրության և եզրակացություններու:

² Տե՛ս անդ, էջ 9:

³ Տե՛ս **Ղեւոնդ Վրդ. Ալիշան**, Միսուան կամ Հայկական Կիլիկիա, Վենետիկ, 1885. «Հայ Վենետ», Վենետիկ, 1896:

⁴ Տե՛ս **Մեսրոպ Վրդ. Ուղուրլեան**, Պատմություն Հայոց Գաղթականության և շինության Եկեղեցւոյ Հայոց, Վենետիկ, 1891:

⁵ Տե՛ս **Եոզէֆ Ստրժիգովսկի**, Հայերու ճարտարապետությունը և Եւրոպան, գերմաներէն, Վիեննա, 1918, երկու հատոր:

⁶ Տե՛ս **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն Հայ Գաղթականության, հտ. Բ., Գահիրէ, 1955, էջ 586-609:

⁷ Տե՛ս **Արմէն Զարեան**, Հայ ճարտարապետության տարածումը և Լեւոնարտո Դա Վինչիի Հայկական վարկածը, Երեւան, 1994 և «Հայ ճարտարապետություն. քննական և տեսական հարցեր», Երեւան, 1996:

⁸ Տե՛ս **Լեւոն Զէքիեան**, Le colonie Armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene = Միջնադարեան Իտալիոյ Հայ Գաղութները և Իտալական-Հայկական մշակութային յարաբերությունները. "First International Symposium of Armenian Art", Վենետիկ, 1978, էջ 803-946:

«Հայ-Իտալական ճարտարապետական առընչություններ» հասկացողությունը, անշուշտ, բառական լայնիմաստ հարցադրում մըն է: Այդ հասկացողութեան մէջ ընկալուած են նաեւ «Բիւզանդական Առընչություններ» եւ «Բիւզանդական Արուեստ» արտայայտությունները, իբր Իտալիոյ մշակութային պատմութեան ուշագրաւ օղակներէն մէկը: Ուրեմն, Հայ-Իտալական առընչություններ հասկացողությունը կ'ընդգրկէ Միջերկրականեան շրջանի ամբողջ տարածքը: Եւ այսօր գոյություն ունին արդէն Հայկական ճարտարապետական Առընչություններու բացայայտումին նուիրուած որոշ ուսումնասիրություններ՝ ճարտարապետ Արշալիր Թորամանեանի⁹, ճարտարապետ Գառնիկ Շախկեանի¹⁰ եւ ճարտարապետ Շահէ Տէր-Գէորգեանի աշխատանքներով¹¹:

Որքան ծանօթ է ինձի, ճարտարապետ Վ. Ազնեհիբլեանի պատմաճարտարապետական խորություն ունեցող այս ուսումնասիրությունը, որ գիտականօրէն կ'արծարծէ բոլոր տեսակի հարցադրումները եւ ճարտարապետական հմտութեամբ կատարուած փաստարկումներով կը քննարկէ եւ կը հաստատէ Հայ-Իտալական-Եւրոպական առընչությունները, իր նախատիպը չէ ունեցած:

Կարեւոր յստակում մը: Յիշեցի, թէ «Հայ-Իտալական Առընչություններ» հասկացողութեան մէջ ընկալուած են «Բիւզանդական Առընչություններ» եւ «Բիւզանդական Արուեստ» արտայայտությունները, իբր Իտալիոյ պատմութեան ցայտուն երևոյթներէն մէկը: Սակայն, մեր հմուտ Հեղինակը, իրաւացիօրէն նկատել կու տայ թէ «Բիւզանդական արուեստ» գոյություն չէ ունեցած: Ինչպէս կը բնորոշեն նաեւ եւրոպացի գիտնականները, այդ մէկը՝ Բիւզանդական Կայսրութեան մէջ գտնուող ժողովուրդներու՝ Յոյներու, Կապադովկիացիներու, Հայերու եւ Ասորիներու դարերով ստեղծած արուեստի եւ ճարտարապետութեան համադրումէն յառաջացած արուեստն է, որ եւրոպացիներուն կողմէ ԺԹ. դարուն յայտնաբերուելով՝ անուանեցին պատմութեան բնմէն հեռացած Բիւզանդիոնի Կայսրութեան անունով, քանի որ անոնք տակաւին ծանօթ չէին բնիկ ժողովուրդներու պատմութեան եւ անոնց մշակոյթին¹²:

Նիւթին մասնագէտ՝ Կարապետ Վրդ. Տէր-Սահակեան կը գրէ. «Հայ էր (բիւզանդական) բանակին մէկ մասը: Հայ էին զօրավարները: Ընկերային բոլոր դասակարգերը Հայկական տարր մը ունէին իրենց մէջ, ազդեցիկ եւ ազահ՝ տիրապետելու: Ինչո՞ւ մոռնալ այս ճշմարտությունը: Այո՛, Բիւզանդիոն մուսլիման քաղաք մը պիտի դառնար, բայց Վասիլ եւ Չմշկիկ (Հայ կայսրերը) արդէն կանխած էին զայն Հայկականի փոխելու»¹³:

⁹ Տե՛ս **Արշալիր Թորամանեան**, Մոլդավիայի Հայկական Պատմաճարտարապետական Յուշարձաններ, Երևան, 1989, «Մոլդավիայում Հայերի շինարարական գործունեության պատմությունից», Երևան, 1991 եւ «Միջնադարեան Հայաստանի եւ Բալկանեան երկիրների ճարտարապետությունը», Երևան, 2003:

¹⁰ Տե՛ս **Գառնիկ Շախկեան**, Հայ-արաբական ճարտարապետական առընչակցություններ, Երևան, 2007:

¹¹ Տե՛ս **Շահէ Տէր-Գէորգեան**, Հայաստանի եւ Սիրիայի վաղ քրիստոնէական ճարտարապետական առընչություններ, Երևան, 2000:

¹² Տե՛ս **Վարուժան Ազնեհիբլեան**, Հայ-իտալական ճարտարապետական առընչություններ, Երևան, 2012, էջ 20:

¹³ **Կարապետ վրդ. Տէր-Սահակեան**, Հայ Կայսրեր Բիւզանդիոնի, հտ. Ա., Վենետիկ, 1905, էջ 9-10:

Հայ-Բիզանդական յարաբերություններու պատկերը եւ Բիզանդիոնի մէջ Հայերու տիրական գործունէութեան մասին յստակ բնութագրութեամբ իր հեղինակաւոր խօսքը ունի Յոյն արուեստաբան՝ Պ. Խարանիս. «Մօտաւորապէս հինգ հարիւր տարի Հայերը կարելորդ դեր մը խաղացին բիզանդական կայսրութեան քաղաքական, զինուորական եւ վարչական կեանքին մէջ: ...Բայց մասնաւորապէս մեծ եղաւ անոնց դերը Թ.-Ժ. դարերուն... Յատկապէս մեծ եղաւ անոնց դերը Ժ. դարուն, երբ իբր զինուոր եւ սպայ, վարչական պաշտօնատար կամ կայսր, անոնք տիրական դիրք գրաւեցին կայսրութեան ընկերային, զինուորական եւ քաղաքական կեանքին մէջ եւ լայնօրէն ծառայեցին անոր մեծութեան: Հայերու դերը այնքան գերակշիռ էր, որ կարելի է Բիզանդական Կայսրութիւնը «Յունահայկական» յորջորջել: «Յունական», որովհետեւ, ինչպէս միշտ, իր քաղաքակրթութիւնը յունական էր: «Հայկական», որովհետեւ այն տարրը, որ վարեց անոր ճակատագիրը եւ անոր պաշտպանութեան համար հայթայթեց մեծագոյն մասը զինուորներուն՝ մեծամասնութեամբ Հայ էր կամ Հայկական ծագում ունէր: Այս դերը նաեւ համաշխարհային պատմական նշանակութիւն ունէր, որովհետեւ այդ շրջանին է որ կայսրութիւնը իր մեծագոյն յաջողութիւնները արձանագրեց, երբ ամէն տեղ իր բանակները յաղթական էին, իր միսիոնարները Աւետարան կը քարոզէին եւ Աւետարանին հետ քաղաքակրթութիւն կը տարածէին հարաւ-արեւելեան Սլաւներուն մէջ եւ իր Հայ ուսումնագէտները յարութիւն կու տային Յունական հին քաղաքակրթութեան եւ այդ կերպով կ'ապահովէին անոր գրականութեան տեսականացումը: Այս է թերեւս այն մեծագոյն ծառայութիւնը, որ Հայերը տուած են քաղաքակրթութեան»¹⁴:

Տէր-Սահակեանի եւ Խարանիսի զոյգ վկայութիւնները չափազանց նշանակալից բնութագրումներ են՝ Յոյն Բիզանդիոնի մէջ Հայերու պատմական ներկայութեան եւ անոնց աշխատունակ գործունէութեան վերաբերող:

Հայկական ճարտարապետական յղացքներու, ոճերու եւ յօրինուածային ազդեցութիւններու կողքին, Հեղինակին որակաւոր ուսումնասիրութեան հիմք ու փաստ ծառայած են նաեւ Հայերու դէպի Արեւմուտք գաղթը, Գաղթականութեան ստեղծման շարժառիթները, գաղթականներու բռնած ուղղութիւնները եւ գաղթական կեդրոններու մէջ ստեղծուած Հայ եկեղեցական կառոյցները, որոնց կարգին՝ նկատի առած է նաեւ «Պաղիկեան» (մեր Հայ Պատմագիրներու եւ Եկեղեցական Հեղինակներու մօտ «աղանդաւոր» կոչուած) ուժեղ շարժումին հակած Հայ հալածականներու եւ արքորուածներու տեղաշարժը: Կրօնական-ընկերային այս շարժումը ուժեղ ծաւալ ստացած է Հայաստանի եւ Բիզանդիոնի մէջ՝ Է.-Թ. դարերուն: Համաձայն անգլիացի պատմաբան Ed. Gibbonի, «The dangerous heresy of Paulicians, shook the East and enlightened the West», այսինքն՝ Պաղիկեան շարժումը «Ցնցեց Արեւելքը եւ լուսաւորեց Արեւ-

14 Պ. Խարանիս, Հայերը Բիզանդական Կայսրութեան մէջ, Վիեննա, 1966, էջ 123-124, հրտկ. Հայկ Պէրպլերեան. տե՛ս նաեւ Արմէն Զարեան, Հայ ճարտարապետութեան տարածումը եւ Լեոնարդո Տա Վինչիի Հայկական վարկածը, Երեւան, 1994, էջ 61:

մուտքը»¹⁵: Իսկ Արշակ Ալպոյաճեան, որ Հայ Գաղթականության պատմության մեծ մասնագետ մըն է, կը նշէ. «Իրապէս Քրիստոնէայ Հայաստանի պատմության մէջ չէ կատարուած շարժում մը, որ այնքան խոր է համատարած ազդեցութիւն գործած ըլլայ Եւրոպայի ո՛չ միայն կրօնական, այլեւ քաղաքական եւ քաղաքակրթութեան պատմության վրայ, որքան գործած է Հայ-Պաղիկեան աղանդը, որ Հայության հոգեկան ներաշխարհին ամենահարազատ արտայայտութիւնը եւ Հայոց ազատականութեան ամենէն կարկառուն նշանն էր: Այս շարժումը, միեւնոյն ատեն կարելորդ ազդակ մը եղաւ, քարոզական խանդավառութեամբ ոգևորուած այդ Հայերուն՝ հալածանքի ճամբով տարածուելու դէպի եւրոպական երկիրներ, որոնց մէջ անշուշտ առաջին տեղը պիտի գրաւէր Իտալիան, մանաւանդ անոր Բիզանդական իշխանութեան ենթակայ մասը»¹⁶: Պ. Խարանիս կ'անդրադարձնէ նաեւ թէ «Պաղիկեան այն կեդրոնները, որ այդ ատեն (Բիզանդական) Կայսրութեան կցուեցան, անտարակոյս մեծագոյն մասամբ Հայկական էին»¹⁷:

Պատմական իրականութեան այս մօտեցումով է որ Վ. Ազգեհիրլեան կը հետազօտէ, կը քննարկէ Հայ Գաղթավայրերու մէջ իրականացած Հայկական Ճարտարապետութիւնը, անոր ազդեցութիւնը, ներգործութիւնը եւ դերը: Իմ կարծիքով, Արմէն Զարեանէն ետք, այս գիտական ճոխ մերձեցումը, մինչեւ այսօր, այսպիսի համակողմանի մակարդակով խորապէս չէր ուսումնասիրուած:

Հեղինակը աչալոյշութեամբ նկատի առած է այս բոլորը, համոզուած ըլլալով թէ Հայ գաղթավայրերը հանդիսացած են այն գլխաւոր կամուրջը, որուն միջոցով Հայաստանը եւ Հայերը կապ հաստատած են Եւրոպայի զանազան երկիրներուն հետ:

Մասնագէտ ճարտարապետներ եւ արուեստաբաններ գրեթէ ամբողջ Եւրոպայի մէջ նշմարած են Հայկական ճարտարապետութեան յատակագծային, յօրինուածային, ոճային եւ շինարարական արուեստի բացայայտ ազդեցութիւններ: Այս պատճառով ալ՝ Հայկական ճարտարապետութեան ազդեցութեան բացայայտումները չեն սահմանափակուիր միայն Իտալիոյ տարածքով, այլեւ Եւրոպայի զանազան երկիրներու մէջ: Սակայն, բոլոր ազդեցութիւններն ալ յայտնուած են Բիզանդիոնի Կայսրութեան եւ բիզանդական մշակոյթի միջնորդութեամբ: Ազդեցութիւնները Բիզանդիոնէն անցնելով Իտալիա, Իտալիոյ մէջ յայտնուած են Հայ ճարտարապետութեան բնորոշ տարրերու կառուցուածային եւ ոճային արտայայտութիւնները: Բացայայտ է թէ Իտալիոյ Հայ Գաղութներու ստեղծման համընթաց՝ երկրի զանազան քաղաքներուն մէջ՝ Հայ առեւտրականներու եւ ճարտար արհեստաւոր-վարպետներու ներկայութիւնն ալ զարկ տուած է պաշտամունքային-եկեղեցական շինութիւններու կառուցումին:

Հայկական ճարտարապետութեան ազդեցութեան հարցը աւելի հիմնաւորելու նպատակով, յարմար է որ ակնարկուի հոս պատմական բացատրիչ իրականութեան

15 Edward Gibbon, The decline and Fall of the Roman Empire, vol. V, London, 1911, p. 183.

16 Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Գաղթականության, հտ. Ա., Գահիրէ, 1941, էջ 333:

17 Պ. Խարանիս, նշվ. աշխ., էջ 52:

մը: Բիւզանդացի Յուստինիանոս Ա. Կայսրի ժամանակ (483-565) Հայերու ներկայութիւնը Իտալիոյ մէջ կապուած է Բիւզանդիոնի կայսերական բանակի հրամանատար Նարսէսի կամ Ներսէսի հետ (Դ.-Ե. դար): Ներսէսը հետեւած է Բիւզանդիոնի քաղաքաշինական քաղաքականութեան: Ան վերաշինած է Հռաւեննա եւ Միլանո քաղաքները: Անկին. Զ. դարուն, Ներսէսը Վենետիկի մէջ կառուցած է Ս. Թէոդոր-Սան Ճեմինիանո եւ Մենա կոչուած եկեղեցիները (այսօրուան Ս. Մարկոս տաճարին կից, երկուքն այսօր չկան): Հռոմի «Ատ Ագուաս Սալվիաս» անունով վանքը շինած է Ներսէս Պատրիկը: Իսկ Վենետիկի Լճակին մէջ գտնուող Թորչելլո կոչուած կղզիին վրայ՝ Հռաւեննայի Հայ Էկկարք կամ Փոխարքայ «Իսապետ»ի կամ Սահակի կը վերագրուի շինութիւնը ճարտարապետական պատմութեան մէջ այնքան կարեւոր կեդրոնագմբէթ Սանթա Փոսգա կոչուած եկեղեցիին: Փաստերը կը վկայեն ո՛չ միայն Հայերու ներկայութիւնը Իտալիոյ մէջ, այլեւ Հայագի զինուորականներու շինարարական գործունէութեան մասին: Վկայութիւններ կան նաեւ, որ պաշտամունքային կառոյցներու տիպերը տարածողները եղած են Հայ եկեղեցականներ¹⁸:

Հայկական ճարտարապետական ձեւերու մշակումներով ստեղծուած եկեղեցական շինութիւններու տարբերակները անհատ արուեստագէտի երեւակայութեան իրագործումները չէին, այլ Հայաստանի մէջ շինարարական դարաւոր փորձառութեան կուտակումներու արդիւնք: Բազմաթիւ օրինակներու մէջէն յիշենք նշանակալից եւ խօսուն օրինակ մը եւս, որ Հռոմի այսօրուան Ս. Պետրոսի հսկայ տաճարի պարագան է: Այս մասին յարգելի ճարտարապետը փաստացիօրէն կը գրէ, թէ Ս. Պետրոս տաճարին տեղը նոր յօրինուածքով եկեղեցի մը կառուցանելու մտադրութիւնը իրականացնելու համար՝ յայտարարուած լաւագոյն նախագիծը, իբր ճարտարապետական գաղափարախօսութեան համապատասխանող ստեղծագործութիւն կամ «Ժամանակի ոգուն համապատասխանող» յօրինուածք՝ «Գերադասուեց Միքէլ Անճելոյի նախագիծը, որի հիմքում ընդգրկուած էին Բագարանի ճարտարապետական յօրինուածքին լուծումները: Բագիլիկալ յօրինուածքով գոյութիւն ունեցող Ս. Պետրոս եկեղեցին քանդուեց ու նրան փոխարինեց այսօրուան կեդրոնագմբէթ Տաճարը, Բագարանի Ս. Թէոդորոս եկեղեցին յօրինուածքով, որ եւ Հայ-Իտալական ճարտարապետական Առնչութիւնների ամկայութեան դրսեւորման ապացոյցներից է»¹⁹:

Իտալացի ճարտարապետ արուեստաբաններ՝ Paolo Cuneo եւ Tommaso Breccia Frataocchi, 1967-1969 տարիներուն պատմական Հայաստանի Վասպուրական Նահանգ (ներկայիս՝ Թուրքիա) կատարած իրենց հետազօտական ուղեւորութեան իբր արդիւնք, երկուքն ալ Սորադիի կամ Սորատի Ս. Էջմիածին եկեղեցիի մասին գիտական առանձին մենագրութիւններ հրատարակեցին, առաջին անգամ մասնագիտական սպառիչ տեղեկութիւններ ներկայացնելով գիտական հասարակութեան, մէկը իտալերէն, իսկ միւսը ֆրանսերէն (եկեղեցին կառուցուած է Է. կամ Թ. դարուն):

¹⁸ Տե՛ս **Արմէն Զարեան**, Հայ ճարտարապետութեան տարածումը եւ Լեոնարտո Տա Վինչիի վարկածը, էջ 83:

¹⁹ **Վ. Ազշենիդեան**, նշվ. աշխ., էջ 38 եւ 68. հմմտ. **Արմէն Զարեան**, նշվ. աշխ., էջ 100:

Fratadocchi, իր ուսումնասիրության մեջ կ'արձանագրել հետևեալ համոզումը. «Սորադիրի եկեղեցին կը պատկանի կեղրոնակագմ կառույցներու այն մեծ ընտանիքին, որ իր բազմապիսի տարբերակներով կը կազմէ Հայ ճարտարապետության ամենահարուստ եւ հետաքրքրական գլուխներէն մէկը: ...Քառակուսի յատակագիծով եւ հատուած անկիւններով գմբէթը, իբր նման որոնումներու հետեւանք, աւելի ուշ դարերուն գոյութիւն ունի նաեւ Եւրոպայի տարբեր երկիրներու մէջ, Իտալիոյ մէջ Պրիելլայի մկրտարանը (Ժ.-ԺԱ. դար, Փիեմոնթէ), Անգոնա քաղաքի Սանթա Մարիա Տելլա Փորթա Նուովա եկեղեցին (ԺԱ. դար) եւ Մոնթէ Սանթ'Անճելոյի Ռոթարիի գերեզման-դամբարանը (ԺԲ. դար), Սպանիոյ Գաթալոնիայի Գաթիլիանոյի մէջ Լոզայի Սան Պանթալիոն եկեղեցին (ԺԲ. դար), եւ այլն...»²⁰: Եզրակացութիւն. ուրեմն, Սորադիրի Ս. Էջմիածին եկեղեցւոյ կառուցումէն շուրջ 300-350 տարիներ ետք՝ նմանօրինակ յօրինուածքով պաշտամունքային կառույցներ իրականացուած են Եւրոպայի տարբեր-տարբեր երկիրներու մէջ²¹:

Հարկաւոր է նշել նաեւ Տեկորի տաճարին ճարտարապետական իւրայատուկ առանձնայատկութիւնները. պայտաձեւ կամարներու եզակի շինելակերպը, սեպաձեւ քարերու ատամնաւոր շարուածքը, ինչպէս նաեւ այն, որ անոր գմբէթը Հայկական ճարտարապետութեան հնագոյն օրինակը կը հանդիսանայ եւ համեմատելով աւելի ուշ ժամանակներու ընթացքին իրականացուած գմբէթներու հետ, յստակ կը յայտնուի Հայկական գմբէթաշինութեան զարգացման ընթացքը: Այս առումով, արեւելագետ արուեստաբան Եոզէֆ Ստրիժգովսկին եզրակացուցած է թէ «Իտալական Վերածնունդի մեծ ճարտարապետները լարեցին իրենց ոյժերը՝ ձգտելով կառուցանել գմբէթը այնպէս՝ ինչպէս Հայաստանի մէջ, իբր տարածութեան միաւորը պսակող գագաթ: Այս նպատակին համապատասխան զարգացաւ Արեւմուտքի ճարտարապետութիւնը յաջորդ դարերուն ու կը յարատեւէ մինչեւ մեր օրերը»²²:

Միլանոյի Brera Ակադեմիայի Տնօրէն՝ Carlo Perocalli, «Հայ ճարտարապետութիւնը Դ.-ԺԸ. դարերուն» նուիրուած ցուցահանդէսի բացման առիթով, Հոկտեմբեր 27, 1968ին, իր ելոյթին մէջ գիտական մակարդակով բնորոշած է Հայկական ճարտարապետութեան ազդեցութիւնը Իտալիոյ Միջնադարեան ճարտարապետութեան վրայ. «Թոյլ տուէք ինծի միտք մը. եթէ գոյութիւն ունի հարց մը, որու պարագային մենք՝ Իտալացիներս, համաձայն չենք զիջումներ կատարելու, այդ ալ Վերածնունդի Իտալական ըլլալն է: Ես չեմ ուզեր պատիւի այդ հարցը շօշափել: Ամէն պարագային, ձեզ կը հրաւիրեմ խորհիլ այստեղ ցուցադրուած կեղրոնակագմ գմբէթով կառույցներու որոշ յատակագիծերու շուրջ: Կը կարծեմ, պատահական երեւոյթ չէ այն, որ Իտալական Միջնադարի որոշ յուշարձաններ շատ նման են Հայկականին, օրինակ՝ Գա-

20 T. B. Fratadocchi, La Chiesa di Echmiatzin a Soradir, Roma, 1971. Paolo Cuneo, L'eglise de Saint-Echmiatzine a Soradir dans le Vaspurakan, Paris, 1968:

21 Տե՛ս Վ. Ազգեհիլլեան, նշվ. աշխ., էջ 71-72:

22 Եոզէֆ Ստրիժգովսկի, Հայերու ճարտարապետութիւնը եւ Եւրոպան, էջ 862. հմմտ. Արմէն Զարեան, Հայ ճարտարապետութեան տարածումը..., էջ 28:

գալէ Մոնֆերրատոյի մուտքի սրահը իր հատուող կամարներու համակարգով նման է գուտ Հայկական գաղթներուն: Աւելին. Հայկականին նման են Իտալիոյ մէջ ԺԵ. եւ ԺԶ. դարերուն նախագծուած ո՛չ սակաւաթիւ շէնքեր եւ չկառուցուած Լեոնարտոյինները եւ կառուցուած Լեոնարտեանները, ինչպէս օրինակ՝ Գրեմայի մատուռը: Քառակուսիի վրայ բացուող գմբէթը չէր կրնար չմտահոգել Լեոնարտոն. այդ մէկը հնարներ էին Հայերը, իսկ ինքը (Լեոնարտոն)՝ Հայերէն վերցնելով նոյն թեման, զարգացուցած եւ դարձուցած է համաշխարհային իրականութիւն: Նման վերամշակում ո՛չ մէկ կերպով կը նսեմացնէ մասնակիցները. նոյնը ըրեր է Պախը Վիվալտիի թեմաներով»²³:

Փաստացիօրէն կը յայտնուի թէ «Լեոնարտո Դա Վինչին 700 տարիներ առաջ, Եւրոպա ներմուծուած է Հայկական ճարտարապետութեան դասական ոճը... (այսինքն)՝ կեդրոնի կամարակապ չորս մոյթերու վրայ թմբուկով հանգչող գմբէթի յօրինուածքը»²⁴:

Իտալացի ուրիշ արուեստարան մը՝ Ֆերնանտա Տէ Մաֆֆէի, լաւապէս ծանօթ Իտալական ճարտարապետութեան պատմութեան, 1970 թուականին հաստատած է թէ «Մենք չենք, որ սկիզբ դրած ենք Հայկ. ճարտարապետութեան ուսումնասիրութեան: Այդ մէկը շատո՛նց մեզ մօտ է եւ առաջինը եղած է Լեոնարտո Տա Վինչին»²⁵: Հայկ. ճարտարապետութեան ծանօթացումի ճանապարհը իսկապէս բացեր է Վերածնունդի հանճարեղ Իտալացին: Հարկ է այդ ճամբան շարունակել: Այս էր Տէ Մաֆֆէիի ըսածին իմաստը:

Վ. Ազնեիդէան, համեմատելով Հայ գաղթականներու շարժումները, անոնց Եւրոպա թափանցումը, տարածումը, ոճերու սկզբնաւորումը եւ զարգացումը, գիտականօրէն բացայայտած է, որ ճիշտ այդ ժամանակաշրջաններուն կը յայտնուի ճարտարապետական ազդեցութիւններու ներկայութիւնը: Իտալիա ներթափանցած քարտաշ, որմնադիր, շինարար եւ ճարտարապետներ, իբր արեւելքցիներ կը կոչուէին «Օփերայիոս Կրեզօ» (Յոյն վարպետներ, այսինքն՝ բիւզանդացիներ) եւ քանի որ Իտալիայէն դէպի Արեւելք միակ ծանօթ քրիստոնէայ պետութիւնը Բիւզանդիոնն էր եւ Հայ գաղթական վարպետները Իտալիա մուտք կը գործէին Բիւզանդիոնէն, բնականաբար կը կոչուէին «Կրեզօ»²⁶:

Ճարտարապետական-շինարարական գործունէութեան հետ կապուած կարելի էր երևոյթներէն են նաեւ շէնքերու քարերուն վրայ Հայ վարպետներու կողմէ փորագրուած նշանները: Յատկապէս հետաքրքրական է, այն պարագան, որ Հայերը՝ իբր շինարար, արուեստագետ եւ ճարտարապետ, կը գործէին Բիւզանդիոնի մէջ: Գերմանացի ուսումնասէլ՝ Վալթըր Նիս, 1988ին հրատարակած իր մէկ ուսումնասիրութեան մէջ, կը վկայէ, որ «Վարպետներու նշանները, որոնք մեր մօտ կը յայտնուին ԺԱ. դարէն սկսեալ, արդէն գոյութիւն ունին Հայաստանի մէջ Զ.էն մինչեւ ԺԳ. դար»²⁷:

23 Արմէն Զարեան, նշվ. աշխ., էջ 49-50:

24 Վ. Ազնեիդէան, նշվ. աշխ., էջ 58:

25 Արմէն Զարեան, Հայ ճարտարապետութիւն, էջ 14:

26 Տե՛ս անդ, էջ 76:

27 Անդ, էջ 81-82:

«Մեր քարքարոտ բարձրավանդակեն, - կը գրէ Հայկ. Ճարտարապետութեան մեծ վաստակաւոր մասնագէտը՝ Թորոս Թորամանեան, - իջան, տարածուեցան մեր արուեստի շնորհքները դէպի Բալքանները, Բիզանդիոն, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսա: Մեր գաղթական վարպետները, մեր հալածական ճարտարները, արշաւող ազգերը տարին այդ շնորհքները, որոնք եղան ներշնչումի, մտածումի, նմանութեան, թելադրութեան ու նորութիւններու ազդակներ՝ բիզանդական, գոթիկ, ռոմանական եւ նոյնիսկ արաբական արուեստներու համար»²⁸:

Հայ Ժողովուրդը միշտ ալ տաղանդաւոր ու հաստատ մնաց իր սեփական գեղարուեստին՝ յատկապէս եկեղեցական ճարտարապետութեան բնորոշ իւրայատկութեան մէջ: Բարեբախտաբար, թող ներուի արտայայտութեանս, Քաղկեդոնի 451 թուականի Եկեղեցական Ժողովէն ետք՝ աւելի խորացող կրօնական-եկեղեցական վիճիք իրարմէ բաժնեց-հեռացուց Հայ Եկեղեցին եւ Յունականը: Ասիկա, իմ անձնական համոզումովս, թերեւս նպաստաւոր եղաւ Հայկական Ճարտարապետութեան ինքնատկութեան պահպանումին եւ գոյատեւումին: Այլապէս կրնար այսպէս կամ այնպէս վնասուիլ կամ կորսնցնել Հայ Եկեղեցական Ճարտարապետութեան իւրայատուկ ինքնութիւնը եւ սեփական դիմագիծը: Հայաստանի մէջ գեղարուեստը մնաց մեր ժողովուրդին երեսակայութեան եւ կեանքին ամէնէն հասուն արտայայտութիւնը եւ՝ երկար ժամանակ անձեռնմխելի:

Համոզուած եմ թէ Ճարտարապետ Վ. Ազեհիբլեանի Հայկական Ճարտարապետութեան նուիրում փաստագրական այս հետազոտութիւնը հոյակապ իրագործում մըն է ճարտարապետական հարցերու բացայայտումով եւ լուսաբանութիւններով. ունի չափազանց կարեւորութիւն եւ նշանակութիւն, գիտական ու մասնագիտական շատ լուրջ մակարդակ, արդիականութիւն եւ Հայկական Ճարտարապետութեան պատմութեան վերաբերող միջազգային արժէք: Ասոր համար ալ, ուսումնասիրութիւնը կարելիին չափ շուտով՝ պետք է միջազգային հանրութեան ներկայացուի անգլերէն լեզուի թարգմանութեամբ:

Հայկական Ցեղասպանութեան 100ամեակը նշող հանգրուանին, այս ուսումնասիրութիւնն ալ, ուրիշներու կարգին, պէտք է գրաւէ միջազգային կազմակերպութիւններու եւ մտաւորականութեան ուշադրութիւնը՝ ի նպաստ Պատմական Հայաստանի մէջ տակաւին կանգուն կամ կիսաւէր մնացած եկեղեցական մեր արժեքաւոր յուշարձաններու պահպանութեան եւ պաշտպանութեան:

Հնուտ հեղինակը արժանի է բարձր գնահատանքի:

ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

²⁸ Տիրան Մարութեան, Հայ Դասական Ճարտարապետութեան Ակունքներում, Երեւան, 2003, էջ 5: